ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԹԱՓՈՒՐ ՀԱՍՏԻՔԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՄԱՍԻՆ

24.03.2017 19:56

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) իրավական հարցերով փորձագետի (քրեաիրավական մասնագիտացմամբ) թափուր հաստիքի համալրման նպատակով ՀՀ փաստաբանների պալատն առաջարկում է **մինչև 2017 թվականի ապրիլի 10-ը** info@advocates.am էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկել Ձեր ինքնակենսագրականը (**հայերեն և նկարով**):

Ներկայացված հայտերը քննարկվելու են **երկու փուլով**՝ առաջին փուլում ինքնակենսագրականի ուսումնասիրության միջոցով ստուգվելու է թեկնածուի համապատասխանությունը նվազագույն պահանջներին, իսկ երկրորդ փուլում՝ անցկացվելու է հարցազրույց՝ առաջին փուլը հաղթահարած թեկնածուների հետ:

Թեկնածուների համար սահմանված է հետևյալ նվազագույն պահանջները.

- բարձրագույն կրթություն(իրավագիտություն).
- MS Word, MS Excel ծրագրերի իմացություն, ինտերնետ ռեսուրսներից օգտվելու կարողություն.
- Անգլերեն և ռուսերեն լեզուների գերազանց իմացություն՝ գրավոր և բանավոր.
- Հետազոտությունների կատարման, իրավական փաստաթղթերի, վերլուծական նյութերի կազմման հմտություններ:

ՀՀ փաստաբանների պալատի իրավական հարցերով փորձագետի (քրեաիրավական մասնագիտացմամբ) հիմնական գործառույթներն են՝

- Պալատի խորհրդի կարգապահական գործերով որոշումների նախագծերի մշակում.
- Պալատի նախագահի՝ կարգապահական վարույթ հարուցելու, ինչպես նաև կարգապահական վարույթ հարուցելը մերժելու մասին որոշումների նախագծերի մշակում.
- Պալատին հասցեագրված՝ օրինագծերի վերաբերյալ պալատի կարծիքի նախագծի մշակում.
- Պալատի անունից ՀՀ սահմանադրական դատարան ներկայացվող կարծիքների (amicus curiae) նախագծերի մշակում.
- Պալատի ներքին և անհատական իրավական ակտերի, ինչպես նաև իրավական այլ ակտերի նախագծերի մշակման համար անհրաժեշտ հետազոտությունների կատարում և համապատասխան նախագծերի մշակում.
- Պալատի մասնակցությամբ դատական գործերով անհրաժեշտ դատավարական փաստաթղթերի նախագծերի մշակում.

Պալատի գործառույթներից բխող այլ իրավական փաստաթղթերի կազմման նպատակով անհրաժեշտ հետազոտությունների կատարում:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })